ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

01 մարտի 2016 թ. № 44 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՄՐՑՈՒՅԹԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «գ» և «ժ.1» կետերի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում Հանրապետության Նախագահի մրցանակներ հիմնելու մասին» ՆԿ-113-Ն կարգադրության 1-ին կետի «դ» ենթակետի՝ *հրամայում եմ՝*

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) 2016 թվականի կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի:

2) Մրցույթի վարժությունների գծապատկերները՝ համաձայն № 2 հավելվածի:

3) Մրցույթի 1-ին և 2-րդ փուլերի հաշվետվությունների ձևերը՝ համաձայն № 3 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում նշված մրցույթն անցկացվում է «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի № 1 հավելվածի № 1 աղյուսակի 08 բաժնի 01 խմբի 01 դասի «07. Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում» ծրագրի համաձայն, որն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Խաչիկ Ասրյանին:

Գ. ՂԱՋԱՐՅԱՆ

Հավելված № 1
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի
2016 թվականի Հունիս 1 *-ի*
№ 44 *-Ա/1 հրամանի*

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի *(այսուհետ՝ Մրցույթ)* նպատակն է՝ անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, բնակչության առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում:

2. Մրցույթի խնդիրներն են՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղությամբ կատարվող աշխատանքների խթանում, բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով ընտանեկան կապերի ամրապնդում և առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում, հաշմանդամային սպորտի զարգացման խթանում, սոցիալական հավասարության խթանում, հաշմանդամների շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում:

2. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

3. Մրցույթն անցկացվելու է տվյալ օրացուցային տարվա հունիս-հուլիս ամիսներին՝ 3 փուլով. 1-ին և 2-րդ փուլերը՝ նախնական, 3-րդ փուլը՝ եզրափակիչ:

1) 1-ին փուլն անցկացվելու է հունիսի 1-ից մինչև հունիսի 15-ն ընկած ժամանակահատվածում՝ Հայաստանի Հանրապետության 42 քաղաքային և գյուղական համայնքներում, Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում՝ Ստեփանակերտ քաղաքում և 6 շրջաններում *(1-ին փուլի մրցումների անցկացման համար տրվում է 3 օր):*

2) 2-րդ փուլն անցկացվելու է հունիսի 18-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում՝ համաձայն ներկայացված ժամանակացույցի՝

ա. Կոտայքի մարզ – հունիսի 18-ից մինչև 20-ը (ք. Չարենցավան),

բ. Գեղարքունիքի մարզ – հունիսի 19-ից մինչև 21-ը (ք. Գավառ),

գ. Տավուշի մարզ – հունիսի 20-ից մինչև 22-ը (ք. Իջևան),

դ. Լոռու մարզ – հունիսի 21-ից մինչև 23-ը (ք. Վանաձոր),

ե. Շիրակի մարզ – հունիսի 22-ից մինչև 24-ը (ք. Գյումրի),

զ. Արագածոտնի մարզ – հունիսի 23-ից մինչև 25-ը (ք. Աշտարակ),

է. Արմավիրի մարզ – հունիսի 24-ից մինչև 26-ը (ք. Արմավիր),

ը. Արարատի մարզ – հունիսի 25-ից մինչև 27-ը (ք. Արտաշատ),

թ. Վայոց ձորի մարզ - հունիսի 26-ից մինչև 28-ը (ք. Եղեգնաձոր),

ժ. Սյունիքի մարզ – հունիսի 27-ից մինչև 29-ը (ք. Կապան),

ժա. ք. Երևան - հունիսի 27-ից հուլիսի 1-ը,

ժբ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն - հունիսի 29-ից մինչև հուլիսի 1-ը (ք. Ստեփանակերտ):

3) 3-րդ՝ եզրափակիչ փուլի մրցումներն անցկացվելու են 6 օրում՝ Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում: Եզրափակիչ փուլի անցկացման ստույգ ժամկետի մասին Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության *(այսուհետ՝ Նախարարություն)* կողմից կտեղեկացվի լրացուցիչ:

3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4. Մրցույթի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Նախարարությունը:

5. Մրցույթի 1-ին և 2-րդ փուլերի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության համապատասխան վարչությունները և բաժինները: Եզրափակիչ փուլի մրցումների անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

6. Մրցույթի առաջին, երկրորդ և երրորդ փուլերի ընթացքում վնասվածքներ ստացած մասնակիցների բուժումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

7. Մրցույթն անցկացվում է չորս տարիքային խմբերով՝

1) 1-ին տարիքային խումբ՝ 2008 թվականից մինչև 2010 թվականը ծնված երեխա ունեցող ընտանիքներ.

2) 2-րդ տարիքային խումբ՝ 2005 թվականից մինչև 2007 թվականը ծնված երեխա ունեցող ընտանիքներ.

3) 3-րդ տարիքային խումբ՝ 2002 թվականից մինչև 2004 թվականը ծնված երեխա ունեցող ընտանիքներ.

4) 4-րդ տարիքային խումբ՝ 1999 թվականից մինչև 2001 թվականը ծնված երեխա ունեցող ընտանիքներ:

5) Հաշմանդամություն ունեցող անձանց *(հայրը կամ մայրը անվավայլակով)* ընտանիքները եզրափակիչ փուլի մրցույթին մասնակցում են 1 տարիքային խմբով: Հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքներում երեխայի տարիքային խումբն է՝ 2010 թվականից մինչև 2003 թվականը:

8. Մասնակցության պայմաններն են՝

1) Մրցույթի 1-ին փուլին կարող են մասնակցել բոլոր ընտանիքները, որոնք ունեն բժշկի թույլտվություն: Ընտանիքի կազմը՝ 3 անձ *(հայրը, մայրը և երեխան՝ անկախ սեռից)*.

2) ընտանիքը մրցույթին մասնակցում է միասնական համազգեստով.

3) յուրաքանչյուր ընտանիք իրավունք ունի մասնակցելու միայն մեկ տարիքային խմբի մրցույթին.

4) Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքներում, Երևան քաղաքի վարչական շրջաններում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում՝ Ստեփանակերտում և վարչական շրջաններում, յուրաքանչյուր տարիքային խմբում 1-ին փուլին պետք է մասնակցի առնվազն 9 ընտանիք:

9. Մրցույթի 2-րդ փուլին մասնակցում են Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքներում, Երևան քաղաքի վարչական շրջաններում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (Ստեփանակերտում և վարչական շրջաններում) 1-ին փուլում ըստ տարիքային խմբերի մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված ընտանիքները:

10. Մրցույթի 3-րդ՝ եզրափակիչ փուլին մասնակցում են Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2-րդ փուլում ըստ տարիքային խմբերի մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված ընտանիքները, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքները՝ *(հայրը կամ մայրը անվավայլակով)*:

5. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱՁԵՎԵՐՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (ՉՈՐՍ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ)

11. Մրցույթի մրցաձևերն են՝

1) 1-ին և 2-րդ տարիքային խումբ՝ № 1, № 2, № 3, № 4, № 5 և № 7 մրցաձևեր.

2) 3-րդ և 4-րդ տարիքային խումբ՝ № 1, № 2, № 4, № 5, № 6 և № 7 մրցաձևեր:

1) Խաղային փոխանցավազք՝ 30 մ (տե՛ս № 2 հավելվածի № 1 վարժության նկարը)

Առաջին մասնակիցը՝ ընտանիքի երեխան, մրցավարի հրահանգով վազքով մոտենում է ներքնակին, կատարում գլուխկոնձի վարժությունը *(մեկնարկից ներքնակ՝ 5 մ)*, վերցնում է ներքնակի առջև դրված մականը, այնուհետև, նշակետի մոտ դրված թենիսի գնդակը վարելով, ոլորապտույտ անցնում է 5 կանգնակների միջով, մոտենում է հարվածային

նշագծին *(ներքնակից մինչև 1-ին կանգնակը՝ 3 մետր, կանգնակների հեռավորությունը՝ 2 մետր, վերջին կանգնակից մինչև նշագիծ՝ 7 մ)* և այնտեղից 5 մետր հեռավորությունից գնդակը հարվածով՝ ուղարկում է դեպի դարպասը *(դարպասի լայնությունը՝ 60 սմ, բարձրությունը՝ 40 սմ)*: Մասնակից երեխան՝ մականը ձեռքին՝ վազքով շրջանցում է դարպասը և վերադառնում է ներքնարկի մոտ, մականը թողնելով նշագծի վրա՝ վերադառնում մեկնարկային գիծ, ձեռքի հպումով էստաֆետը փոխանցում հաջորդ մասնակցին՝ ընտանիքի մորը:

Նույն վարժությունը կատարում է մայրը կամ հայրը *(մայրը գլուխկոնծի վարժությունը չի կատարում)*, վերջին կատարողը, հայրը կամ մայրը վարժությունը եզրափակում է՝ մականը ձեռքին հատելով մեկնարկային գիծը:

Յուրաքանչյուր անարդյունավետ հարվածի համար ընտանիքը ստանում է 1 տուգանային միավոր *(մեկ տուգանային միավորի դիմաց մասնակից ընտանիքի ժամանակին գումարվում է մեկ վայրկյան)*:

Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագն է ավարտում վարժությունը *(վայրկյան)*:

2) Վարժություն բասկետբոլի գնդակով *(տե՛ս № 2 հավելվածի № 2 վարժության նկարը)*

Առաջին մասնակիցը՝ հայրը, մրցավարի հրահանգի համաձայն բասկետբոլի գնդակը վարելով, մոտենում է բասկետբոլի օղակի մոտի նշակետին *(մեկնարկից օղակ՝ 8 մետր, օղակից նշակետ՝ 3 մետր)*, անցնելով նշագիծը՝ կատարում է նետում ազատ ոճով, արդյունավետ նետումից հետո գնդակը արագորեն վարելով՝ վերադառնում է մեկնարկ և հանձնում հաջորդ մասնակցին: Եթե նետումը անարդյունավետ է, ապա վերցնում է գնդակը, վարելով հասնում մեկնարկ և վերադառնում՝ նոր նետում կատարելու համար: Երկրորդ նետումից հետո *(անկախ արդյունքից)* վերադառնում է մեկնարկ և գնդակը հանձնում ընտանիքի մյուս անդամին: Նույնը կատարում են ընտանիքի մյուս անդամները: Վարժությունը կատարում են երկու անգամ: Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը *(վայրկյան)*:

3) Խաղային փոխանցավազք՝ թենիսի գնդակներով *(տե՛ս № 2 հավելվածի № 3 վարժության նկարը)*

Առաջին համարի մասնակիցը՝ հայրը, մեկնարկային գծից վազքով մոտենում է գետնին մեկ ուղղությամբ դրված 3 օղակներին *(օղակի չափը՝ 25-30 սմ)*: 1-ին օղակի մեջ դրված են թենիսի 5 գնդակներ *(մեկնարկից 1-ին օղակ՝ 10 մետր, օղակների հեռավորությունը մեկը մյուսից՝ 2 մետր)*: Հայրը վազքով մոտենում է 1-ին օղակին, վերցնում է օղակի մեջ դրված 1-ին գնդակը, տեղադրում 2-րդ օղակի մեջ, վերադառնում է 1-ին օղակի մոտ, վերցնում է 2-րդ գնդակը, դարձյալ տեղադրում 2-րդ օղակի մեջ, և այդպես մինչև վերջին գնդակի տեղադրումը: Ավարտից հետո հայրը շարունակում է վազքը, մոտենում է վերջին օղակից 13 մետր հեռավորությամբ դրված զամբյուղին *(կրամագիծը՝ 30-35 սմ)*, շրջանցում է այն և վազքով մոտենում է մեկնարկային գծին, էստաֆետը հանձնում հաջորդ մասնակցին: Մայրը, վերցնելով 2-րդ օղակի թենիսի 5

գնդակները, հերթականությամբ *(ինչպես հայրը)* տեղադրում է դրանք 3-րդ օղակի մեջ, վազքով մոտենում է զամբյուղին, շրջանցում այն և վերադառնում մեկնարկային գիծ՝ էստաֆետը հանձնելով երեխային: Երեխան վազքով մոտենում է 3-րդ օղակին, թենիսի 5 գնդակները հավաքելով փոքրիկ պարկի մեջ՝ մոտենում է զամբյուղին, թողնելով պարկը զամբյուղի մոտ, վերցնում է դարթսի 3 նետերը, մոտենում է 3 մետր հեռավորությամբ գտնվող նշագծին և ազատ ոճով կատարում է նետումներ *(հեռավորությունը դարթսի թիրախից նշագիծ՝ 2.37 մետր, դարթսի տրամագիծը՝ 45 սմ)* և վերադառնում մեկնարկային գիծ: Միավորները հաշվարկվում են 3 նետման ընդհանուր արդյունքով՝ համաձայն աղյուսակի: Ըստ ձեռք բերված միավորների, համաձայն նշված աղյուսակի, հանվում կամ ավելացվում են վայրկյաններ ընտանիքի կատարած արդյունքների վրա: Իսկ այն մասնակցին, որը միավոր չի ստանում, տրվում են 3 տուգանային վայրկյաններ, որոնք գումարվում են ընտանիքի վաստակած արդյունքներին:

Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է կատարել վարժությունը *(վայրկյան):*

Աղյուսակ.

Արդյունքը (միավորը)	Տրված միավորը (վայրկյաններով)	Թիրախ (տրամագիծը՝ 45 սմ)
30 - 27	-6.0	
26 - 23	-5.0	
22 - 19	-4.0	
18 - 15	-3.0	
14 - 10	-2.0	
9 - 5	-1.0	
4 - 1	0	

4) Հեռացատկ (տեղից) *(տե՛ս № 2 հավելվածի № 4 վարժության նկարը)*

Հեռացատկ կատարվում է կանգ դրությունից երկու ոտքի հրումով: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ ունի երկու փորձի իրավունք: Հաղթողը որոշվում է ընտանիքի երեք անդամների ցատկերի լավագույն արդյունքների ընդհանուր գումարով:

5) Խաղային փոխանցավազք 80 մ (15 մ + 25 մ + 40 մ) *(տե՛ս № 2 հավելվածի № 5 վարժության նկարը)*

Առաջին մասնակիցը՝ ընտանիքի հայրը, մեծ գնդակը ոտքերի արանքում դրված, ելման դրությունից մրցավարի ազդանշանով ոստյուններով առաջ է շարժվում 15 մետր և ձեռքի հպումով նշագծի մոտ էստաֆետը փոխանցում երկրորդ մասնակցին՝ ընտանիքի մորը, որը վազքով մոտենում է գետնին մեկ ուղղությամբ դրված մարմնամարզական 5 օղակներին *(հեռավորությունը մեկը մյուսից՝ 3 մետր, մեկնարկից առաջին օղակ՝ 4 մետր),* օղակները հաջորդաբար անցկացնելով գլխի վրայով՝ դնում է գետնին, վազքով մոտենում և ձեռքի հպումով էստաֆետը փոխանցում է երրորդ մասնակցին՝ երեխային: Վերջինս

մոտենում է ներքնակին, կատարում գլուխկոնծի *(մեկնարկից մինչև ներքնարկ՝ 4 մետր)*, այնուհետև անցնում է 5 մետր հեռավորության վրա դրված մեծ պարկի միջով *(երկարությունը՝ 3 մետր, տրամագիծը՝ 70 սմ)*, վազքով մոտենում է գնդակին *(ֆուտբոլ)*, գնդակը ոտքով ոլորապտույտ վարելով՝ արագ անցնում է 4 կանգնակների միջով *(մեծ պարկից մինչև գնդակ՝ 5 մետր, կանգնակների հեռավորությունը՝ 2 մետր)* մոտենում է զամբյուղին, գնդակը տեղադրում է զամբյուղի վրա *(կանգնակից մինչև զամբյուղ՝ 5 մետր)*, վերցնում է պարկը *(չափսը՝ 25 սմ տրամագծով, երկարությունը՝ 40-50 սմ)*, արագորեն պարկի մեջ է լցնում վազքուղու վրա շարված թենիսի 6 գնդակները *(գնդակների հեռավորությունը մեկը մյուսից՝ 1 մետր)* և պարկը ձեռքին վազքով հատում վերջնագիծը *(վերջնագծից 6-րդ գնդակ՝ 5 մետր)*:

Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը *(վայրկյան)*:

6) Հրաձգություն (օդամղիչ հրացանով) *(տե՛ս № 2 հավելվածի № 6 վարժության նկարը)*

Մրցումը կազմակերպվում և անցկացվում է հրաձգության կանոնների համաձայն: Հեռավորությունը թիրախից՝ 10 մետր *(կրակելու դիրքը՝ ըստ ցանկության)*, 2 փորձնական և 5 հաշվարկային կրակոց: Մասնակցում են ընտանիքի բոլոր անդամները:

Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որն ընդհանուր հաշվարկով բոլորից շատ միավորներ է վաստակել:

7) Հավաքիր «ՀԱՂԹԱՆԱԿ» բառը *(տե՛ս № 2 հավելվածի № 7 վարժության նկարը)*

Առաջին մասնակիցը՝ ընտանիքի երեխան, մեկնարկային գծի մոտից մրցավարի հրահանգով վերցնում է արկղի մեջ դրված տառերից մեկը *(տառերը գրված են Ա4 չափսի թղթի վրա)*, վազքով զիգզագաձև շրջանցում է միմյանցից աջ և ձախ դրված 5 կանգնակները *(մեկնարկից մինչև 1-ին կանգնակ՝ 3 մետր, կանգնակների միջև հեռավորությունը՝ 2,0 մետր)*, ոլորապտույտ անցնում է կողք կողքի դրված երկու աթլետիկական արգելքների միջով *(արգելքների բարձրությունը՝ 0,90 մետր, լայնությունը՝ 1,25 մետր, վերջին կանգնակից արգելք՝ 3 մետր)*, վազքով մոտենում է վահանակին *(երկրորդ արգելքից մինչև վահանակ՝ 5 մետր, վահանակի չափսն է՝ 2,0 մետր x 40 սմ, 1,2 մետր բարձրությամբ)*, տառը կախում է վահանակից և արագ վերադառնում մեկնարկային գիծ՝ ձեռքի հպումով էստաֆետը փոխանցելով հաջորդ մասնակցին, և այդպես մինչև «ՀԱՂԹԱՆԱԿ» բառի հավաքումը:

Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը *(վայրկյան)*:

Վահանակի վրա տառերի տեղադրումը պարտադիր է, հակառակ դեպքում ընտանիքին կգրանցվի տուգանային՝ 1 վայրկյան:

12. Մրցույթի ընթացքում յուրաքանչյուր խախտման համար ընտանիքին տրվում է մեկ տուգանային միավոր, որը համարժեք է 1 վայրկյանի:

13. Յուրաքանչյուր մարզաձևում մեկից ավելի ընտանիքների արդյունքների հավասարության դեպքում առավելությունը համապատասխանաբար տրվում է՝

1) ընտանիքի կազմում ավելի փոքր տարիքի երեխա ունեցողին.

2) ընտանիքի կազմում ավելի մեծ տարիքի *(գումարային)* ծնողներ ունեցողին.

3) ընտանիքի կազմում աղջիկ երեխա ունեցողին:

14. Մրցույթի յուրաքանչյուր մարզաձևում որոշվում են 1-ինից 36-րդ տեղերը հետևյալ կերպ. 1-ին տեղ՝ 36 միավոր, 2-րդ տեղ՝ 35 միավոր, և այդպես մինչև 36-րդ տեղը:

15. Ընդհանուր միավորներով հաղթող ընտանիքը որոշվում է առանձին մարզաձևում ձեռք բերած միավորների առավելագույն գումարով: Մեկից ավելի ընտանիքների միավորների հավասարության դեպքում առավելությունը համապատասխանաբար տրվում է՝

1) առանձին մարզաձևերում առավել բարձր մրցանակային տեղեր գրաված ընտանիքին.

2) ընտանիքի կազմում ավելի փոքր տարիքի երեխա ունեցողին.

3) ընտանիքի կազմում ավելի մեծ տարիքի *(գումարային)* ծնողներ ունեցողին.

4) ընտանիքի կազմում աղջիկ երեխա ունեցողին:

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱՁԵՎԵՐՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԱՆՎԱՍԱՅԼԱԿՈՎ ՀԱՇՄԱՆԴԱՄ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ՄԵԿ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ)

16. Մրցույթի մրցաձևերն են՝

1) Խաղային փոխանցավազք 30 մ

Առաջին մասնակիցը՝ երեխան, մրցավարի հրահանգով վազքով մոտենում է ներքնակին, կատարում գլուխկոնծի վարժությունը *(մեկնարկից ներքնակ՝ 5 մետր)*, վերցնում է ներքնակի առջև դրված օղակը *(օղակի տրամագծի չափը՝ 20-25 սմ)*, ոլորապտույտ վազքով արագ անցնում է 5 գուրզերի միջով *(ներքնակից մինչև 1-ին գուրզը՝ 3 մետր, գուրզերի հեռավորությունը՝ 3 մետր, վերջին գուրզից մինչև կանգնակ՝ 8 մետր)*, վազքով մոտենում է կանգնակին *(30-35 սմ բարձրությամբ)*, օղակը տեղադրում է կանգնակի վրա և այն շրջանցելով՝ վազքով վերադառնում է մեկնարկային գիծ՝ ձեռքի հպումով էստաֆետը փոխանցելով անվասայլակով ծնողին *(մորը կամ հորը)*: Անվասայլակով մայրը *(կամ հայրը)* մոտենում է ներքնակի մոտ՝ կանգնակի վրա դրված օղակին, այն վերցնելով՝ անվասայլակով ոլորապտույտ անցնում է 5 գուրզերի միջով, օղակը տեղադրում է կանգնակի վրա, շրջանցելով կանգնակը՝ արագ վերադառնում է մեկնարկային գիծ և էստաֆետը փոխանցում թիմի մյուս անդամին: Նույն վարժությունը կատարում է հաջորդ մասնակիցը *(գլուխկոնծի վարժությունը ծնողները չեն կատարում)*: Վարժության ավարտից հետո էստաֆետը արագ հանձնում է երեխային: Երեխան՝ առանց օղակի, ուղիղ վազքով արագ մոտենում է դիմացի կանգնակին, վերցնում է մեկ օղակ, վազքով մոտենում է եզրագծին տեղադրված կանգնակին, օղակը գցում կանգնակի վրա:

Նույնը կատարում են թիմի բոլոր անդամները: Վարժությունը եզրափակում է մայրը *(կամը հայրը):* Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը *(վայրկյան):*

2) Վարժություն բասկետբոլի գնդակով

Առաջին մասնակիցը՝ անվասայլակով հայրը կամ մայրը, մրցավարի հրահանգի համաձայն բասկետբոլի գնդակով մոտենում է բասկետբոլի օղակին *(մեկնարկից օղակ՝ 8 մետր, օղակից նշակետ՝ 3 մետր),* անցնելով նշագիծը՝ կատարում է նետում ազատ ոճով, արդյունավետ նետումից հետո գնդակով վերադառնում է մեկնարկ և հանձնում հաջորդ մասնակցին: Եթե անվասայլակով հայրը *(կամ մայրը)* վարժությունը արդյունավետ չի կատարում, ապա փորձում է երկրորդ անգամ, հետո միայն վերադառնում: Երկրորդ մասնակիցը, բասկետբոլի գնդակը վարելով, մոտենում է բասկետբոլի օղակին, անցնելով նշագիծը՝ կատարում է նետում ազատ ոճով, արդյունավետ նետումից հետո գնդակը վարելով վերադառնում է մեկնարկ և հանձնում հաջորդ մասնակցին: Եթե վարժությունը արդյունավետ չի կատարում, ապա վերցնում է գնդակը, վարելով հասնում մեկնարկ, շրջանցում է տեղադրված արգելքը և վերադառնում՝ նոր նետում կատարելու համար: Երկրորդ նետումից հետո *(անկախ արդյունքից)* վերադառնում է մեկնարկ և գնդակը հանձնում ընտանիքի մյուս անդամին: Նույնը կատարում են ընտանիքի մյուս անդամները: Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը *(վայրկյան):*

3) Խաղային փոխանցավազք՝ թենիսի գնդակներով

Առաջին համարի մասնակիցը՝ մայրը *(կամ հայրը),* մեկնարկային գծից մոտենում է գետնին մեկ ուղղությամբ դրված 3 օղակներին *(օղակի տրամագիծը՝ 25-30 սմ):* 1-ին օղակի մեջ դրված են թենիսի 5 գնդակներ *(մեկնարկից 1-ին օղակ՝ 10 մետր, օղակների հեռավորությունը մեկը մյուսից՝ 2 մետր):* Օղակներին մոտեցած մայրը *(կամ հայրը)* վերցնում է օղակի մեջ դրված 1-ին գնդակը, տեղադրում 2-րդ օղակի մեջ, վերադառնում 1-ին օղակի մոտ, վերցնում 2-րդ գնդակը, դարձյալ տեղադրում 2-րդ օղակի մեջ, և այդպես մինչև վերջին գնդակի տեղադրումը: Ավարտից հետո շարունակում է վազքը, մոտենում վերջին օղակից 15 մետր հեռավորությամբ դրված զամբյուղին *(տրամագիծը՝ 30-35 սմ),* շրջանցում է այն և վազքով մոտենում մեկնարկային գծին, էստաֆետը հանձնում հաջորդ մասնակցին՝ երեխային:

Երեխան՝ վերցնելով 2-րդ օղակի թենիսի 5 գնդակները, հերթականությամբ, ինչպես 1-ին մասնակիցը, տեղադրում է դրանք 3-րդ՝ 40-50 սմ բարձրություն ունեցող կանգնակի վրա դրված օղակի մեջ, վազքով մոտենում է զամբյուղին, շրջանցում այն և վերադառնում մեկնարկային գիծ՝ էստաֆետը հանձնելով անվասայլակով *հորը (կամ մորը),* որը, արագ մոտենալով կանգնակին, հավաքում է թենիսի 5 գնդակները, տեղադրում կանգնակի վրա դրված փոքրիկ պարկի մեջ, մոտենում նշագծին, կատարում 5 նետում զամբյուղի մեջ *(նետումը կատարվում է ազատ ոճով)* և վերադառնում:

Յուրաքանչյուր անարդյունավետ նետման համար ընտանիքը ստանում է 1 տուգանային միավոր *(յուրաքանչյուր 1 տուգանային միավորի դիմաց մասնակցի*

ժամանակին գումարվում է 1 վայրկյան, հեռավորությունը զամբյուղից նշագիծ՝ 2 մետր): Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է կատարել վարժությունը *(վայրկյան):*

4) Խաղային փոխանցավազք 80 մ (20 մ+ 20 մ + 40 մ)

Առաջին մասնակիցը՝ անվասայլակով հայրը *(կամ մայրը),* մրցավարի հրահանգի համաձայն արագ անցնում է 20 մետր և ձեռքի հպումով նշագծի մոտ էստաֆետը փոխանցում երկրորդ մասնակցին՝ հորը *(կամ մորը),* որը վազքով մոտենում է գետնին մեկ ուղղությամբ դրված մարմնամարզական 5 օղակներին *(հեռավորությունը մեկը մյուսից՝ 3 մետր, մեկնարկից առաջին օղակ՝ 3 մետր, վերջին օղակից վերջնագիծ՝ 5 մետր),* օղակները հաջորդաբար անցկացնելով գլխի վրայով՝ դնում է գետնին, վազքով մոտենում վերջնագիծ և ձեռքի հպումով էստաֆետը փոխանցում է երրորդ մասնակցին՝ երեխային: Վերջինս վազքով ոլորապտույտ անցնում է 4 գուրզերի միջով *(մեկնարկից մինչև գուրզ՝ 4 մետր, գուրզերի հեռավորությունը՝ 2 մետր, ներքնակից վերջին գուրզ՝ 2 մետր),* մոտենում է ներքնակին, կատարում գլուխկոնծի, այնուհետև անցնում է 8 մետր հեռավորության վրա դրված մեծ պարկի միջով *(երկարությունը՝ 3 մետր, տրամագիծը՝ 70 սմ),* վերցնում է 3 մետր հեռավորության վրա դրված փոքրիկ պարկը *(չափսը՝ 25 սմ տրամագիծ, երկարությունը՝ 50 սմ),* արագորեն պարկի մեջ է լցնում վազքուղու վրա շարված թենիսի 6 գնդակները *(գնդակների հեռավորությունը մեկը մյուսից՝ 1 մետր)* և պարկը ձեռքին վազքով հատում վերջնագիծը: Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը *(վայրկյան):*

5) Օղակներով նետումներ նշանակետին

Յուրաքանչյուր ընտանիքի մասնակից կատարում է հինգ նետում՝ 3 մետր հեռավորությունից:

Առաջին մասնակիցը օղակը *(տրամագիծը՝ 25-30 սմ)* նետում է կանգնակին, որն ունի 40-50 սմ բարձրություն: Նույնը կատարում են հաջորդ մասնակիցները: Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը կատարել է առավել արդունավետ նետումներ:

Չի թույլատրվում օղակը նետելիս անցնել նշագիծը:

6) Հավաքիր «ՀԱՂԹԱՆԱԿ» բառը

Առաջին մասնակիցը՝ ընտանիքի երեխան, մեկնարկային գծի մոտից մրցավարի հրահանգով վերցնում է արկղի մեջ դրված տառերից մեկը *(տառերը գրված են Ա4 չափսի թղթի վրա),* վազքով շրջանցելով անցնում է մեկ ուղղությամբ դրված 5 կանգնակների միջով, *(մեկնարկից մինչև 1-ին կանգնակ՝ 3 մետր, կանգնակների միջև հեռավորությունը՝ 2 մետր),* վազքով մոտենում է զիգզագաձև շարված 6 օղակներին, աջ և ձախ ոտքերով կատարում է ցատկեր *(վերջին կանգնակից մինչև առաջին օղակ 3 մետր, օղակների հեռավորությունը մեկը մյուսից 40 սմ, օղակների տրամագիծը՝ 60 սմ),* վազքով մոտենում է վահանակին *(վերջին կանգնակից մինչև վահանակ՝ 8 մետր, վահանակի չափսն է՝ 2,0 մետր x 40 սմ, 1,2 մետր բարձրությամբ),* տառը կախում է վահանակից և արագ

վերադառնում է մեկնարկային գիծ՝ ձեռքի հպումով էստաֆետը փոխանցելով հաջորդ մասնակցին, և այդպես մինչև «ՀԱՂԹԱՆԱԿ» բառի հավաքումը *(անվասայլակով մասնակիցը՝ հայրը կամ մայրը, վարժությունը կատարելիս անցնում են օղակների կողքով)*:

Հաղթող է ճանաչվում այն ընտանիքը, որը բոլորից արագ է ավարտում վարժությունը *(վայրկյան)*:

Վահանակի վրա տառերի տեղադրումը պարտադիր է, հակառակ դեպքում ընտանիքին կգրանցվի տուգանային՝ 1 վայրկյան:

17. Յուրաքանչյուր մարզաձևում մեկից ավելի ընտանիքների արդյունքների հավասարության դեպքում առավելությունը համապատասխանաբար տրվում է՝

1) ընտանիքի կազմում ավելի փոքր տարիքի երեխա ունեցողին.

2) ընտանիքի կազմում ավելի մեծ տարիքի *(գումարային)* ծնողներ ունեցողին.

3) ընտանիքի կազմում աղջիկ երեխա ունեցողին:

18. Մրցույթի յուրաքանչյուր մարզաձևում որոշվում են 1-ինից 23-րդ տեղերը հետևյալ կերպ. 1-ին տեղ՝ 23 միավոր, 2-րդ տեղ՝ 22 միավոր, և այդպես մինչև վերջին տեղը:

19. Ընդհանուր միավորներով հաղթող ընտանիքը որոշվում է առանձին մարզաձևում ձեռք բերած միավորների առավելագույն գումարով: Մեկից ավելի ընտանիքների միավորների հավասարության դեպքում առավելությունը համապատասխանաբար տրվում է՝

1) առանձին մարզաձևերում առավել բարձր մրցանակային տեղեր գրաված ընտանիքին.

2) ընտանիքի կազմում ավելի փոքր տարիքի երեխա ունեցողին.

3) ընտանիքի կազմում ավելի մեծ տարիքի *(գումարային)* ծնողներ ունեցողին.

4) ընտանիքի կազմում աղջիկ երեխա ունեցողին:

7. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

20. Մրցույթի 1-ին փուլի առաջնությունում ընդհանուր թիմային հաշվարկում յուրաքանչյուր տարիքային խմբում մրցանակային տեղեր գրաված ընտանիքները պարգևատրվում են Նախարարության կողմից սահմանված դրամական մրցանակներով.

1) 1-ին տեղ՝ 60.0 հազար *(վաթսուն հազար)* դրամ,

2) 2-րդ տեղ՝ 50.0 հազար *(հիսուն հազար)* դրամ,

3) 3-րդ տեղ՝ 40.0 հազար *(քառասուն հազար)* դրամ:

21. Մրցույթի 2-րդ փուլի առաջնությունում ընդհանուր թիմային հաշվարկում յուրաքանչյուր տարիքային խմբում մրցանակային տեղեր գրաված ընտանիքները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով և դրամական մրցանակներով.

1) 1-ին տեղ՝ 150.0 հազար *(մեկ հարյուր հիսուն հազար)* դրամ,

2) 2-րդ տեղ՝ 130.0 հազար *(մեկ հարյուր երեսուն հազար)* դրամ,

3) 3-րդ տեղ՝ 100.0 հազար *(մեկ հարյուր հազար)* դրամ:

22. Մրցույթի 3-րդ՝ եզրափակիչ փուլի առաջնությունում յուրաքանչյուր տարիքային խմբում ընդհանուր թիմային հաշվարկում մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված ընտանիքները, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող ընտանիքները պարգևատրվում են վկայագրերով և համապատասխանաբար 500.0 հազար *(հինգ հարյուր հազար)*, 400.0

հազար *(չորս հարյուր հազար)* և 300.0 հազար *(երեք հարյուր հազար)* դրամ դրամական մրցանակներով և մեդալներով:

23. Մրցույթի 3-րդ՝ եզրափակիչ փուլում յուրաքանչյուր տարիքային խմբում առանձին մարզաձևերից առաջին տեղերը գրաված ընտանիքները, ինչպես նաև հաշմանդամ ունեցող ընտանիքները Նախարարության կողմից պարգևատրվում են 100.0 հազար *(հարյուր հազար)*, 2-րդ տեղերը 50.0 հազար *(հիսուն հազար)* և 3-րդ տեղերը՝ 30.0 հազար *(երեսուն հազար)* դրամ մրցանակներով:

24. Պարգևատրվում է նաև յուրաքանչյուր տարիքային խմբի և հաշմանդամություն ունեցող ընտանիքների ամենակրտսեր մասնակիցը՝ 100.0 հազար *(հարյուր հազար)* դրամով:

25. Մրցույթում ընդհանուր հաշվարկով առաջին, երկրորդ, երրորդ տեղերը գրաված պատվիրակությունները պարգևատրվում են համապատասխան գավաթներով:

8. ԾԱԽՍԵՐԸ

26. Մրցույթի 1-ին և 2-րդ փուլերում մրցանակային տեղեր գրաված ընտանիքներին հավաստագրեր, դրամական մրցանակներ, մրցավարների օրապահիկ, մարզագույք հատկացնում է Նախարարությունը:

27. Մրցույթի 3-րդ՝ եզրափակիչ փուլի կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը *(մրցումների անցկացման համար մարզագույքի, անհրաժեշտ պարագաների և մրցավարների մարզահագուստի ձեռքբերում, մասնակից բոլոր երեխաների համար նվերների ձեռքբերում, գովազդային նյութերի պատրաստում, մրցավարների գործուղում, գիշերավարձ, օրապահիկ, ճանապարհածախս, մրցավարներին դրամական պարգև, մրցանակային տեղեր գրաված թիմերին դրամական մրցանակներով պարգևատրում, վկայագրերի պատրաստրում, կրծքանշանների և մեդալների պատվիրում, գրենական պիտույքների ձեռքբերում, ռադիոհանգույցի ապահովում, տրանսպորտային միջոցների ապահովում, վրանների մեծաղական կոնստրուկցիայի մոնտաժում և ապամոնտաժում, մարզադաշտի վարձակալում, շուրջօրյա շտապ օգնության բժշկական ծառայություն և գավաթներ թիմային հաշվարկով, մրցանակային տեղեր գրաված մարզերին)* իրականացվում են տարեկան պետական բյուջեով նախատեսված «Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար ««Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում» ծրագրի միջոցով:

28. Մրցույթի 3-րդ՝ եզրափակիչ փուլի մասնակից ընտանիքների և յուրաքանչյուր մարզի մեկ ներկայացուցչի գործուղման հետ կապված ծախսերը *(30.0 մլն դրամ, գիշերավարձ, սնունդ և ճանապարհածախս)* իրականացվում են տարեկան պետական բյուջեով նախատեսված «Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար ««Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում» ծրագրի միջոցով, իսկ մասնակից ընտանիքների մարզահագուստի ծախսերը հոգում են գործուղող կազմակերպությունները՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը:

9. ՀԱՅՏԵՐԸ

29. Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կողմից մրցույթի 1-ին փուլի մասնակից ընտանիքները հայտերը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների *(նաև քաղաքային և գյուղական համայնքների)*, Երևանի քաղաքապետարանի *(նաև վարչական շրջանների)* և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության *(նաև վարչական շրջանների)* համապատասխան վարչություններ և բաժիններ մինչև 2016 թվականի մայիսի 25-ը:

30. Մրցույթի 1-ին փուլի հաշվետվությունները ներկայացվում են մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն:

31. Մրցույթի 3-րդ՝ եզրափակիչ փուլի մասնակցության անվանական հայտերը՝ հաստատված մարզպետի, Երևանի քաղաքապետի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից, 1-ին և 2-րդ փուլերի հաշվետվությունները *(ըստ Ձև 1, Ձև 2, Ձև 3 և Ձև 4)* ներկայացվում են Նախարարություն մինչև 2016 թվականի հուլիսի 8-ը: Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում:

32. Մրցույթի 3-րդ՝ եզրափակիչ փուլին հարգելի պատճառներով մասնակցել չկարողացող ընտանիքի փոխարեն պետք է մասնակցի հաջորդ տեղը գրաված ընտանիքը:

33. Մրցույթի 3-րդ՝ եզրափակիչ փուլի ընդունելության օրը ընտանիքը հայտի հետ միասին մանդատային հանձնաժողովին է ներկայացնում՝

1) անձնագիրը (հոր, մոր),
2) ամուսնության վկայականը,
3) բնակության վայրից տեղեկանք լուսանկարով,
4) երեխայի ծննդյան վկայականը:

Բոլոր փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակներով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Վ. ԷԼՈՅԱՆ

Հավելված № 2
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի
2016 թվականի Դեկտեմբեր 1-ի
№ 44-Ա/1 հրամանի

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ
«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ»
2016 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ

Վարժություն № 1 (երեխան, մայրը, հայրը)



Վարժություն № 2 (երեխան, մայրը, հայրը)



Վարժություն № 3




մայրը

(երեխա)



Վարժություն № 4 (երեխան, մայրը, հայրը)

Վարժություն № 5



Վարժություն № 6 (երեխան, մայրը, հայրը)



Վարժություն № 7 (երեխան, մայրը, հայրը)



ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Վ. ԷԼՈՅԱՆ